ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 5

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» հունվարի 2022թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադիմիայի նախագահությունը ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Տիգրան Զաքարյանի (այսուհետ՝ Կազմակերպություն)) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 202663,5 (երկու հարյուր երկու միլիոն վեց հարյուր վաթսուն երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը Ծրագրի առաջադրանքը, այդ թվում նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշնետրը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ-ին հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 Կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 Աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ-ին,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ- ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 202663,5 (երկու հարյուր երկու միլիոն վեց հարյուր վաթսուն երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ

դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտություններիի Ազգային Ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի 24

Հ/հ 900011024115, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝

ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ

0203 Աշտարակ, Ալիխանյան եղբ., 1

Հ/հ 900448000407, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն

ՀՎՀՀ 05001265

Տնօրեն, ծրագրի գիտական ղեկավար՝

ՏԻԳՐԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ. Տ.

Հավելված 1
«27» հունվարի 2022 թ.
Ա-5 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ Նախագահ Աշոտ Սաղյանը և ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի տնօրեն Տիգրան Զաքարյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել **«27» 01 2022 թ. N Ա-5 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝** 202663,5 (երկու հարյուր երկու միլիոն վեց հարյուր վաթսուն երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտություններ Ազգային Ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի 24

Հ/հ 900011024115, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն ԲԸ

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝

ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ

0203 Աշտարակ, Ալիխանյան եղբ., 1

Հ/Հ 900448000407, Ֆինանսների նախարարության գանձապետական գործառնությունների վարչություն

ՀՎՀՀ 05001265

Տնօրեն, ծրագրի գիտական ղեկավար՝

ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Կ. Տ.

Հավելված 2
«27» 01 2022 թ.
N 4-5 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» **ծրագրի**

(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը՝** Հիմնարար և կիրառական գիտահետազոտական աշխատանքների կատարման արդյունքում նոր գիտական արդյունքների ստացում և գիտատեխնիկական մշակումների իրականացում:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները՝**

3.1 Նախատեսված հետազոտությունները և մշակումները պետք է ուղղված լինեն բնագավառի կարևոր արդի և հեռանկարային խնդիրների լուծմանը:

3.2. Դրված խնդիրների լուծման համար պետք է կիրառվեն ժամանակակից հուսալի մեթոդներ, որոնք կապահովեն արդյունքների հուսալիությունը:

3.3. Հիմնարար հետազոտությունների արդյունքները հնարավորին չափ պետք է ուղիներ և հնարավորություններ բացահայտեն նոր էֆեկտիվ տեխնիկական միջոցների և սարքավորումների ստեղծման համար:

3.4. Կիրառական մշակումները պետք է կիրառեն և ընդգրկեն ժամանակակից ինովացիոն բարձր տեխնոլոգիական լուծումներ:

4. **Աշխատանքի բովանդակությունը** (մինչև 3 էջ):

Սույն պայմանագրով նախատեսվող աշխատանքները հանդիսանում են ՌՖԷԻ-ում 2021-2025թ.թ. բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտությունների և մշակումների ծրագրի երկրորդ փուլը: Նշված ծրագրով աշխատանքները կատարվելու են հետևյալ ուղղություններով:

Ուղղություն 1.

Գերբարձր հաճախությունների և տեռահերցային ալիքների ճառագայթումը և ընդունումը, մետանյութերում, ֆոտոնային բյուրեղներում և պլազմայում տարածումը, դաշտերի արտապատկերման և ազդանշանների սինթեզի, զտման և արագագործ թվային մեթոդների և

հանգույցների ստեղծումը: Նոր մեթոդների, տեխնիկական միջոցների և համակարգերի մշակումը ռադիոլոկացիայում, տեխնոլոգիական հսկման և դիագնոստիկայի, շրջակա միջավայրի հեռազննման, բժշկա-կենսաբանական, սեյսմաբանական և այլ կիրառումների համար:

Ուղղություն 2.

Բարակթաղանթային կիսահաղորդչային հետերակառուցվածքների և ցածր չափայնությամբ համակարգերի (նանոլարերի, նանոկետերի) հիմնարար հետազոտությունները՝արևային էներգիայի բարձր էֆեկտիվության փոխակերպիչների, ճառագայթիչների, դետեկտորների և այլ էլեկտրոնային սարքերի ստեղծման նպատակով: Այլ կոնդենսացված նյութերի (պինդ մարմիններում էլեկտրոնային գազերի, հեղուկներում նանոմասնիկային խառնուրդների) ուսումնասիրումը:

2022 թվին նշված երկու ուղղություններով կկատարվեն հետևյալ աշխատանքները.

Ուղղություն 1-ով

- Մագնիսադիէլեկտրիկների հիմքով էլեկտրականապես փոքր անտենաների հետազոտություն:
- Ժամանակի հակադարձման եղանակի կիրառելիության հնարավորության հետազոտումը բազմաթիրախ ռադարային ազդանշանների մշակման նպատակով:
- Իոնային հեղուկների և միկրոալիքային մագնիսական դաշտի փոխազդման հետազոտություն:
- «Սառը» ռադիոհաճախային պլազմայում առաջացող անկայունությունների և կայունացման հնարավորությունների ուսումնասիրում:
- Ուսումնասիրել արագ շարժվող փոքրաչափ օբյեկտների ռադարային և լիդարային մոտակա հայտնաբերման հնարավորությունը:
- Բարձր համաչափությամբ տարբեր անհամասեռ համակարգերի օպտիկական և էլեկտրական հատկությունների ուսումնասիրումը, մասնավորապես "Մաքսվելի ձկան աչք"(Maxwell fish eye) բեկման ցուցիչով:
- Էլեկտրոն-խոռոչային պլազմայի հետ լազերային փոխազդեցության ուսումնասիրությունը բյուրեղական երկչափ նանոկառուցվածքներում:
- Պլազմայի միկրոալիքային գեներատորների՝ավելի բարձր հաճախականությունների տիրույթի անցման հնարավորությունների տեսական ուսումնասիրումը, մասնավորապես, բազմաթիվ ցիկլոտրոնային հարմոնիկների վրա փնջի անկայունության զարգացումը:

- Այլընտրանքային էներգետիկա, փայտածխային, գրաֆիտային և գրաֆենային հիմքերով էլեկտրաքիմիական և էլեկտրաջերմային աղբյուրների մշակումը՝ երկրորդ էլեկտրոդ օգտագործելով ալյումինի ու մոլիբդենի սուլֆիդ պարունակող TiO_2 թիթեղներ:
- Ֆիզիոթերապևտիկ նշանակության էլեկտրոնային սարքի մշակումը և պատրաստումը բժշկական հետազոտությումների համար:
- ԳԲՀ տիրույթում իոնոսֆերային դիտումների համար նախատեսված սարքի մշակումը և հետազոտումը:

Ուղղություն 2-ով

- Երկչափ MoS_2 բյուրեղի հիման վրա սենսորների ստեղծում և հատկությունների ուսումնասիրում:
- P-InSb/n-CdTe կոորդինատային զգայնությամբ քառատարր ինֆրակարմիր ֆոտոընդունիչի բնութագրերի հետազոտում և օպտիմալ կառուցվածքի մշակում:
- Ապակե և ապակեբյուրեղական տակդիրների վրա բարակ-թաղանթային Cu_2SnS_3 արեգակնային տարրերի ստեղծում և պարամետրերի չափում:
- Սիլիցիումի հարթակի վրա լազերա-իմպուլսային նստեցման եղանակի միջոցով ածխածնի նանոչափային թաղանթների ստացում, ստացված կառուցվածքների ֆոտոարձագանքի ուսումնասիրություն, ինչպես նաև պերովսկիտային կառուցվածքով մետաղաօրգանական $CH_3NH_3PbI_{3-x}Cl_x$ թաղանթների օպտիկական բնութագրերի բացահայտում:
- Հետազոտել լիցքավորված դիսլոկացիաների ստոխաստիկ էլեկտրական դաշտերի ազդեցությունը դիէլեկտրական սահմանափակմամբ կիսահաղորդչային նանոկառուցվածքների օպտոէլեկտրոնային հատկությունների վրա:
- Ազնիվ և գունավոր մետաղների նանոմասնիկների խտության փոփոխության ուսումնասիրումը լազերային աբլյացիայի ժամանակ՝ կախված ջերաստիճանից, ոչ ինվազիվ, մոտակա դաշտերում միկրոալիքային էլեկտրոմագնիսական փոխազդեցության միջոցով, իրական ժամանակում:
- Կելերյան կոնֆիգուրացիոն և/կամ փուլային տարածություններով օժտված ինտեգրվող համակարգերի, ինչպես նաև դրանց սուպերսիմետրիկ ընդլայնումների ուսումնասիրումը: Հատուկ ուշադրության կարժանան Ռուիջսենաարս-Շնայդերի մոդելի ընդհանրացումների կառուցումը:

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
ինստիտուտի տնօրեն,
ծրագրի գիտական ղեկավար՝՝ ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 3
«27» հունվարի 2022թ.
N 65 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» **ծրագրի**

(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	*Համառոտ բովանդակությունը*	*Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը*	*Ակնկալվող արդյունքները*	*Կատարման ժամկետները*	*Պահանջվող գումարը (հազար դրամ)*
1.	Փուլ 1	Ծրագրով նախատեսված հետազոտությունների համար անհրաժեշտ գիտատեխնիկական ինորմացիայի (գրականության, նմա-նակների և այլ) և նրանց իրականցման մեթոդների ընտրում և մշակում	Ինֆորմացիայի ամփոփում	Խնդիրների և նրանց լուծման մեթոդների հըս-տակեցում	01.01.2022-31.03.2022	42000,0
2.	Փուլ 2	Հետազոտությունների սկզբնական փուլերի կատարում, տեսական և էքսպերիմենտալ աշխատանքների ծավալում, փորձնական նմուշների նախագծում	Տեսական հե-տազոտություն-ներ, էքսպերի-մենտալ չա-փումներ	Հաշվետվություն, տեխնիկական լուծումներ	01.04.2022-30.06.2022	49198,5
3.	Փուլ 3	Հետազոտությունների հիմնական ծավալ-նեերի իրականացում, տեխնոլոգիական նմուշների պատրաստում	,,	Հաշվետվություն, նմուշների փորձարկում	01.07.2022-30.09.2022	50665,0
4.	Փուլ 4	Արդյունքների ամփոփում, գիտական հրապարակումների պատրաստում և ներկայացում, նմուշների փորձարկումների ակտերի պատրաստում	Արդյունքների ամփոփում	Գիտ. հրապարա-կումներ, նմուշ-ների փորձար-կումների ակտեր	01.10.2022-30.12.2022	60800,0
Ընդամենը						**202663,5**

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
ինստիտուտի տնօրեն,
ծրագրի գիտական ղեկավար՝՝ ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

Հավելված 4
«27» հունվարի 2022 թ.
4-5 N պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» **ծրագրի**
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	*167140.8*	*41785.2*	*41785.2*	*41785.2*	*41785.2*
2	տնտեսական և այլ ծախսեր*	*35522,7*	*214.8*	*7413.3*	*8879.8*	*19014.8*
ԸՆԴԱՄԵՆԸ		*202663,5*	*42000,0*	*49198,5*	*50665,0*	*60800,0*

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ տնօրեն՝

_____ (ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Գլխավոր հաշվապահ՝

_____ (ՆՎԱՐԴ ԶՈՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«27» հունվարի 2022 թ.
Ն-5 N պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	*27100,0*
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*11000,0*
	գազի ծառայություն	*7000,0*
	ջրամատակարարման ծառայություն	*900,0*
	կապի ծառայություն	*1000,0*
	աղբահանություն	*200,0*
	Տրանսպորտային վառելիքի ծախսեր	*7000,0*
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	*3100,0*
4	Նյութեր	*2000,0*
5	Գործուղումներ	*300,0*
6	Գիտական միջոցառումների կազմակերպու	*1000,0*
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	
9	Այլ ծախսեր.....	*2022,7*
Ընդամենը		***35522,7***

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ տնօրեն՝

(ՏԻԳՐԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Գլխավոր հաշվապահ՝

(ՆՎԱՐԴ ՉՈՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

† *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*